տին 'ի կատարել զնաւակատիս նորակառոյց տան նորին, (1815 · յ5 Ապրիլի)։

Նաբոլէոն Պոնաբարդ զերծեալ յարգելանոցէ իւրմէ զօրաժողով եղեւ դիմել 'ի վերայ Գերմանիոյ ջնջել և բառնալ զայն 'ի միջոյ, Պապն Հռոմայ փախուցեալ զերծաւ իւրովքն հանդերձ, տրտունջ ռամկաց և սպառնալիք խսպառ կործանելոյ զՊապութիւնն · նոյն ճայն հնչէր 'ի կողմանց Սպանիոյ, զի հասարակութիւնք նոցին ըմբոստացեալ էին ընդդէմ եկեղեցական իշխանութեան։ Գերմանք, Ռուսք և այլ դաշնաւորք դումարին ընդդէմ Պոնաբարդին ('ի 1 Մայիսի)։

Զիջեալ գլխաւորաց ազգին 'ի Թախանձանս Պողոսի՝ գումարեցան 'ի Պատրիարքարան (յ7 Յունիսի) խորհիլ վասն ազատութեան Աթոռոյն Երուսաղէմի · կոչեցին անդ զՊողոս եպիսկոպոս և զՄկրտիչ վարդապետ, և զկնի բազմադիմի բանից ասեն՝ չէ պարտ տալ զայդքան դրամս Կուսակալին, թէպէտ նա խնդրէ և չգիտէ ասել բաւ որպէս սովորութիւն է նոցա · այլ ընդդիմանալ և ոչ տալ առաւել քան զսահմանեալն, յանձն առնուլ զտառապանս և զբռնութիւնս նորին, տագնապիլ, նեղիլ եւ չարչարիլ համբերութեամբ մինչեւ ցմահ 'ի սէր Ս · Տեղեաց · և 'ի լսել զայն ամենայն ազգին համարձակեսցին բողոք բառնալ առ Արքայ եւ դատանել զհնարն ազատութեան Աթոռոյն · ո՞վ կարէ բառնալ զայդքան ծանրութիւն պարտուց, որ զլսողս անդամ լքանէ։ Կուսակալք չկարեն այդքան խստութեամբ տագնապել զվանականս, եթէ տեսանիցեն 'ի նոսա զարիութիւն ոգւոյ · զի եթէ ունին տացեն ըստ կամաց իւրեանց, և եթէ ոչ, ուստի՞ և ընդէ՞ր տան · ո՞չ-ապաքէն տոկոսաբարդ լեռնակուտակ յոլովութիւն պարտուց դուշակութիւն է կործանման, և կարեվէր խոցեալէ սիրտ ազգին 'ի վերայ այսպիսի թշուառութեան Աթոռոյն · զի տեսանեն զնա վիրաւորեալ յոտից մինչեւ ցգլուխ և չիք 'ի նմա առողջութիւն։ Եւ առ զայրոյթ սրտից իւրեանց զկծեցուցիչ բանիւք նախատէին զՓոխանորդն եղեալ զնա նպատակ բանից, իբրեւ սրեալ սլաքաց, այլ միտք ամենեցուն խոկայր զփրկութիւն Աթոռոյն · և ապա սահմանեցին վարել այսպիսի եղանակաւ։ Ի դալստեան կու-